ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 1845-Ա/2 **12.10.2022 թ.**

«ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1773-Ա/2 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Բաժանորդային համակարգ» ծրագրի շրջանակներում մշակութային հաստատությունների միասնական տեղեկատվական համակարգի ներդրման առաջարկների փաթեթի ստեղծման նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել «Բաժանորդային համակարգ» ծրագրի շրջանակներում մշակութային հաստատությունների միասնական տեղեկատվական համակարգի ներդրման առաջարկների փաթեթի ստեղծման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168 Արվեստների ծրագրի» «11005 Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) նախատեսված գումարներից (տող՝ «Աջակցություն կրթամշակութային նախագծերին») հատկացնել 1680.0 հազար (մեկ միլիոն վեց հարյուր ութսուն հազար) դրամ՝

մշակութային հաստատությունների միասնական տեղեկատվական համակարգի ներդրման առաջարկների փաթեթի ստեղծման ծախսերն ապահովելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Ա. Խաչատրյանի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր),

4. Նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ հսկողություն, բովանդակային հաշվետվությունների ընդունման գործառույթներ:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 30-ի «Բաժանորդային համակարգ» ծրագրի շրջանակներում մշակութային հաստատությունների միասնական տեղեկատվական համակարգի տեխնիկական բնութագրի ստեղծման ծրագիրը հաստատելու և գումար հատկացնելու մասին» N 1773-Ա/2 հրամանը:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Քոչարյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
« » « » 2022 թ.
N -Ա/2 հրամանի

ԾՐԱԳԻՐ

«Բաժանորդային համակարգ» ծրագրի շրջանակներում մշակութային հաստատությունների կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ներդրման առաջարկների փաթեթի ստեղծման

1	Կազմակերպության անվանում	«Արամ Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ ՀՀ, ք. Երևան, Զարուբյան 3
2	Ծրագրի բովանդակությունը	Ծրագրի միջոցով կիրականացվի մշակութային հաստատությունների՝ թանգարանների, համերգասրահների, թատրոնների տեխնիկական, մասնագիտական ռեսուրսների գույքագրում, պահանջների, միասնական տեղեկատվական համակարգի ներդրման համար անհրաժեշտ գործիքակազմի և կառավարման միասնական հարթակ-համակարգի ստեղծման համար առաջարկների փաթեթի ստեղծում: Փաթեթը ներառելու է դպրոցական բաժանորդային ծրագրի արդյունավետ կիրարկման համար առցանց հարթակի ստեղծման մոդել:
3	Ծրագրի իրականացման վայրը	Հայաստան, Երևան, «Արամ Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ
4	Ծրագրի շահառուներ	ՀՀ ԿԳՄՍՆ ենթակայության մշակութային կազմակերպություններ
5	Նպատակ	Մշակութային հաստատությունների կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ներդրման առաջարկների փաթեթի ստեղծման նպատակն է դպրոցական բաժանորդային ծրագրի /աբոնեմենտային ծրագիր/ կիրակումը պատշաճ և համակարգված իրականացնելը:
6	Անցկացման ժամկետ	2022 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներ
7	Ակնկալվող արդյունքներ	Մշակութային հաստատությունների կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ներդրման առաջարկների փաթեթ:
8	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Մշակութային հաստատությունների կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ներդրման առաջարկների 1 փաթեթ: